# ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ

| Թեստային առաջադրանքի ձևը | Հարցը կամ խնդիրը | Օրինակ |
|---|---|---|
| 1.Ճիշտ պատասխանի ընտրություն | Նշեք ճիշտ պատասխանը | Ո՞ր իրավական ակտերին պետք է համապատասխանեն օրենքները:<br>1. Հանրապետության Նախագահի հրամանագրերին և ՀՀ կառավարության որոշումներին.<br>2. Սահմանադրական օրենքներին.<br>3. Այլ օրենքներին և Սահմանադրական դատարանի որոշումներին.<br>4. ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներին և միջազգային պայմանագրերին:<br>(ՀՀ Սահմանադրություն, հոդված 5, մաս 2) |
| 2. Այլընտրանքային ընտրություն | Պատասխանեք «Այո» կամ «Ոչ» | Ճի՞շտ է արդյոք, որ Ազգային ժողովի փակ նիստում քվեարկությունն արգելված է:<br>Պատասխան՝<br>1. «Այո» .<br>2. «Ոչ» :<br>(ՀՀ Սահմանադրություն, հոդված 101, մաս 2) |
| 3.Համապատասխանության որոշում | Դասավորել ըստ համապատասխանության՝ ձախ սյունակի տերմինները և աջ սյունակի մեկնաբանությունները | 1. Կոմպետենցիա՝ — Ա. տեղեկությունների, հասկացությունների, մտքերի, փաստերի և հանգամանքների ամբողջություն, որն անհրաժեշտ է պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթների արդյունավետ իրականացման համար.<br>2. Քաղաքացիական ծառայողների վերապատրաստում՝ — Բ. գիտելիքների, ունակությունների, հմտությունների և վարքագծի ամբողջություն, որն անհրաժեշտ է պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթների արդյունավետ իրականացման համար.<br>3. Մասնագիտական գիտելիք՝ — Գ.քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում քաղաքացիական ծառայության պաշտոնի համապատասխան խմբի նույն ենթախմբում ընդգրկված քաղաքացիական ծառայության պաշտոն.<br>4. Հավասարազոր պաշտոն՝ — Դ. քաղաքացիական ծառայողների մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների հետևողական և շարունակական կատարելագործում.<br><br>Պատասխան՝<br>1) 1-Ա, 2-Բ, 3-Գ, 4-Դ.<br>2) 1-Բ, 2-Գ, 3-Դ, 4-Ա.<br>3) 1-Գ, 2-Դ, 3-Բ, 4-Ա.<br>4) 1-Բ, 2-Դ, 3-Ա, 4-Գ: |

| | | |
|---|---|---|
| 4.Հաջորդականության որոշում | Դասավորեք ճիշտ հերթականությամբ | *Դասավորե՛ք քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման գործողությունների փուլերը ճիշտ հերթականությամբ:*<br>Ա. Մրցույթի նախապատրաստական աշխատանքների իրականացում.<br>Բ. Մրցույթի հարցազրույցի փուլի անցկացում.<br>Գ. Մրցույթի թեստավորման փուլի անցկացում.<br>Դ. Մրցույթ անցկացնող հանձնաժողովի ձևավորում:<br><br>Պատասխան՝<br>1. Ա, Բ, Գ, Դ.<br>2. Գ, Ա, Դ, Բ.<br>3. Գ, Ա, Բ, Դ.<br>4. Ա, Գ, Դ, Բ:<br><br>(ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N1554-Ն որոշում, գլուխներ 3, 4, 5, 6) |